ԷՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԻԶՆԵՍ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Միջսեկտորիալ փոխգործակցության տեսանկյունից պետությունը և բիզնես համայնքը հանդես են գալիս որպես կազմակերպչական և շահային ընդհանրության հիմքով առանձնացված հիմնական հանրային սեկտորներ: Ժամանակակից իրականության մեջ, երբ շահերի խմբերը, առավել ևս դրանց ցանցերը, որոշակի համակարգային ձևով կազմակերպված են և նման ձևով էլ մասնակցում են տարբեր մակարդակների պետական որոշումների մշակման, ընդունման և իրականացման գործընթացին, ձևավորվում են փոխգործակցության մոդելները: Դրանք ծառայում են որպես մեխանիզմ որոշակի հանրային համակարգի ներսում և այլ կառուցվածքների միջև: Բիզնես-պետություն միջսեկտորիալ փոխգործակցության առանցքն է կազմում շահերի ներկայացման, պաշտպանության և համաձայնեցման եղանակների ամբողջությունը: Ավանդականորեն շահերի համաձայնեցումը վերլուծվում է պլյուրալիստական ժողովրդավարության հայեցակարգի շրջանակներում: 20-րդ սկզբից պլյուրալիստական մոդելին հիմնական այլընտրանք հանդես եկավ կորպորատիվիզմը: Կորպորատիվիզմի տեսությունը և պրակտիկան միտված էին բարձրացնել հասարակության հիմնական խմբերի կազմակերպվածության աստիճանը, դրանց պատասխանատվության շրջանակը որոշումների ընդունման և իրականացման ընթացքում: Ստանալով իր բնորոշ գծերը ձեռնարկությունների կորպորատիվ կառուցվածքից՝ կորպորատիվիզմը, սակայն, մարդկանց միջև հարաբերությունների համակարգ է, որ չի սահմանափակվում ձեռնարկության շրջանակներով, ունի քաղաքատնտեսական բնույթ և գտնվում է միջդիսցիպլինար ուսումնասիրման ոլորտում: Տնտեսագիտական մոտեցմամբ այն տնտեսական գործունեության կազմակերպման ձև է: Քաղաքագիտության և հանրային կառավարման տեսանկյունից կորպորատիվիզմը նախևառաջ հանրային ոլորտում պետության հետ փոխհարաբերման այնպիսի տեսակ է, ուր որոշակի կազմակերպված խմբեր ստանում են համապատասխան ոլորտների գրեթե մենաշնորհային ներկայացման փաստացի իրավասություն: Որոշ հեղինակներ կորպորատիվիզմը ընկալում են որպես գաղափարա-

խոսություն, մշակույթ, տնտեսության որոշակի փուլ, հանրային կազմակերպվածության տեսակ և կոնֆլիկտների լուծման ձև [1]: Ժամանակակից դրսևորմամբ, առավել ցայտուն, կորպորատիվիզմը դրսևորվում է տնտեսական քաղաքականության մշակման և բիզնես-պետություն փոխհարաբերություններում: Բիզնեսի հետ փոխգործակցության կորպորատիվ համակարգը ներկայումս բնորոշ է մի շարք եվրոպական երկրներին: Պատմական անցանկալի զուգահեռներից խուսափելու համար գրականության մեջ հիմնականում գործածվում է նեոկորպորատիվիզմ եզրույթը:

Կորպորատիվիզմի հիմքերը և դրսևորումները:

Տեխնոլոգիական առաջընթացը, կապիտալի և աշխատուժի կենտրոնացումը տասնիններորդ դարի վերջում բերում են նրան, որ կորպորատիվ կառուցվածքը դառնում է այն կաղապարը, ուր ծնվում և զարգանում են կառավարման տեսության, վարքաբանության, բիզնեսի կազմկերպման, սեփականատեր աշխատող հարաբերությունների նոր մոտեցումները: Կորպորատիվիզմը ուղղված էր բարձրացնել հանրային հարաբերությունների կանոնակարգվածությունը՝ շեշտադրելով արդյունավետության չափանիշը:

Պատմագաղափարական հիմքերով այն կապված է եվրոպական հիշողության մեջ արմատավորված գիլդիաների սոցիալիզմին: Գիլդիական սոցիալիզմը նախատեսում էր ընդարձակ ինքնավարություն պետությունից յուրաքանչյուր արտադրական ոլորտում որոշակի համապարփակ կազմակերպության՝ կորպորացիայի միջոցով: Կորպորատիվ գիլդիաների շրջանակում, առանց պետական միջամտության նախատեսվում էր լուծել վարձատրության, աշխատանքի տևողության, որակի չափանիշների և այլ նմանատիպ խնդիրներ: Չնայած տարածվածությանը, այս գաղափարները մեծապես մնացին տեսական քննարկումների մակարդակում: Իրականության մեջ դժվար էր ջատագովել մի մոդել, ուր ակնհայտ ներդրված էր շուկայի օրենքների, սպառողների պահանջների անտեսման հնարավորությունը: 20-ական թթ. այս գաղափարները կորպորատիվիզմի անվան տակ քաղաքականության հիմնաքար հռչակվեցին մի շարք եվրոպական երկրներում: Կորպորատիվ պետական կառուցվածքի տակ պրակտիկայում առաջին հերթին հասկացվում էր Իտալիայում՝ Մուսոլինիի, Իսպանիայում՝ Ֆրանկոյի, Պորտուգալիայում՝ Սալազարի, Թուրքիայում՝ Քեմալի ռեժիմները, հաճախ նաև Հիտլերյան Գերմանիան: «Դասական» կորպորատիվիզմի հիմնական տարբերությունը գիլդիաների սոցիալիզմից պետության դերի փոփոխումն է: Հանրային կյանքի և նախևառաջ տնտեսության տարբեր հատվածների ներկայացուցչականությունը ապահովվում էր պետության ընտրությամբ և խիստ հսկողության ներքո: Բիզնես հատվածի միավորումները

տարանջատված էին ըստ արտադրության տեսակի և օժտված սեփական հատվածում կարգավորիչ մենաշնորհներով: Ինքնակազմակերպումը և ինքնուրույնությունը սակայն ոչ թե պետությունից փոխառված լիազորությունների միջոցով էր, այլ սպառողների և մասնակցող ակտորների (փոքր կամ միջին բիզնես, ասոցիացիաներ) սահմանափակման հաշվին: Ժամանակի ավտորիտար ռեժիմների կողմից կորպորատիվիզմի հռչակումը որպես բիզնեսի հետ փոխգործակցության գերակա ձև երկար տարիներով դասեց երևույթը ավտորիտար համակարգին բնորոշ տարրերին:

Նեոկորպորատիվիզմ

Նեոկորպորատիվիզմ եզրույթը հայտնվեց յոթանասունական թվականներին, երբ մի շարք արդեն ժողովրդավարական կարգ ունեցող պետություններում կարիք առաջացավ ընդգծել սեփական կառավարման տարբերությունները պլուրալիստական անգլո-ամերիկյան մոդելից:

Հայտնի քաղաքագետ Ֆիլիպ Շմիտերը տվեց կորպորատիվիզմի սահմանում, որը դարձավ դասական: Ըստ նրա կորպորատիվիզմը «շահերի ներկայացման համակարգ է ուր հիմնական սուբյեկտները կազմակերպված են մենաշնորհային, հարկադրային, հիերարխիկ և ֆունկցիոնալ առումով միմյանցից անջատ կառուցվածքների մեջ, որ ճանաչվում կամ ստեղծվում են պետության կողմից, իսկ վերջինս երաշխավորում է դրանց դիրքերը՝ առաջնորդների ընտրության, պահանջների ու նախընտրությունների որոշման մեջ վճռական դերակատարության դիմաց» [2]: Պլուրալիստական և կորպորատիվ հիմքի վրա գործառնող հասարակությունների տարբերությունը Շմիտերը ցուցադրում է աղյուսակային ձևով:

Շահերի որոշման տիպը	*Որոշումների ընդունման միջոցը*	
	Ճնշման (լոբիզմի) միջոցով	Կենտրոնացման միջոցով
Պլուրալիզմ	1.Դասական ամերիկյան ազդեցության ձև, Ֆրանսիայում աշխատանքային հարաբերությունները	2.Իտալական քաղաքականություն մեջ պետության և արհմիությունների համագործակցությունը, Շվեյցարիայում որոշումների ընդունումը
Կորպորատիվիզմ	3. Սոցիալական պայմանագրերի բրիտանական փորձը	4. Ավստրիական և շվեդական մոդելները (Partitatishe Kommisio, Lapsund Demokratie)

Առաջին տիպի դեպքում կազմակերպված խմբերը սահմանափակ են ուղղակիորեն մասնակցել պետական որոշումների ընդունմանը, երկրորդի դեպքում կառավարությունները փորձում են ինտեգրել խմբերի տարբեր շահերը քաղաքական գործընթացի շրջանակներում: Երկրորդ տիպը ենթադրում է սահմանափակ շրջանակների մոտ հնարավորություն ներկայացնելու այս կամ այն սեկտորի շահերը, ֆորմալացված հարաբերությունների առկայություն պետության և այդ խմբերի միջև և պատասխանատվության կիսում ընդունվող տնտեսական որոշումների համար: Երրորդ տիպը ունի սահմանային բնույթ և ըստ պայմանների ձգտում է առաջին կամ չորրորդ տիպերին: Չորրորդ տիպը ենթադրում է ներկայացուցչականության համար բիզնես շրջանակների միջև ֆորմալ մրցակցության բացակայություն: Ֆ. Շմիտերի կարծիքով նեոկորպորատիվիզմը զիջում է իր դիրքերը զարգացած երկրներում, բայց արդիական է զարգացող երկրների քաղաքական համակարգերում:

Ուսումնասիրողները առանձնացնում են կորպորատիվիզմի տարատեսակներ ժամանակակից աշխարհում. բաց, պետական կորպորատիվիզմները, ավտորիտար, բյուրոկրատական և օլիգարխիկ կորպորատիվիզմերը: Վերջիններս առանձնացվում են իբրև պետականի ենթատեսակ և վերագրվում հիմնականում անցումային հասարակություններին: Պետական կորպորատիվիզմի յուրաքանչյուր ենթատեսակ առաջնային է դիտարկում հարաբերությունները հասարակության կազմակերպված խմբերից մեկի հետ, որը դառնում է գործող համակարգի հիմնասյունը [3-էջ 24]: Այդպիսիք կարող են լինել ուժային կառույցները, բարձրաստիճան բյուրոկրատիան, խոշոր տնտեսական խմբերը, որոշակի սոցիալական խմբի ներկայացուցիչները: Այդ իսկ պատճառով պետական կորպորատիվիզմը միտվում է ինքնակալական կամ նույնիսկ ամբողջատիրական վարչակարգի: Բաց կորպորատիվիզմը կամ նեոկորպորատիվիզմը սահմանափակվում է շահերի համաձայնեցման կառուցվածքի ձևի մեջ: Դրա գաղափարը «տրիպարտիզմի», «սոցիալական երկխոսության» գաղափարների հետ մեկտեղ տարածում գտավ Շվեդիայում, Ավստրիայում, Գերմանիայում և այլ երկրներում որպես կորպորատիվիզմի փափուկ, սոցիալական տարատեսակ: Այս դեպքում առաջնային տեղ է տրվում հիմնական խմբերի միջև կոոպերացիայի սերտացմանը և պետական կանոնակարգմանը: Պետությունը ստեղծում է միջնորդ մարմիններ իր, բիզնես հանրության, նաև քաղաքացիական հասարակության միջև հանդարտ կերպով ֆիլտրելու հանրային սպասումները և պահանջարկները: Կորպորատիվիզմը նպաստում է երկրներում կառավարելիության մեծացմանը, սակայն չի դարձնում դրանք ավելի ժողովրդավար: Մասնակցության խրախուսման և աշխատանքի թափանցիկ կազմակերպման առու-

մով կորպորատիվիզմը զիջում է պլուրալիստական համակարգին, կարելի է նույնիսկ ասել սահմանափակում ժողովրդավարության «մուտքային» հնարավորությունները: Միևնույն ժամանակ «ելքային» մակարդակում ընդգծվում է պատասխանատվության և շարունակականության բարձր գիտակցում: Կորպորատիվիզմը ձգտում է կանոնակարգել շահերի ներկայացվածության համամասնությունը: Քսաներորդ դարի վերջից զբաղվածության տեղափոխումը դեպի ծառայությունների ոլորտ և գլոբալիզացիան մեծապես փոխեցին եվրոպական ավանդական արհմիությունների նշանակությունը և մի շարք հարցեր տեղափոխվեցին ավելիացածր մակարդակ: Առավել աճեց հանրային ծառայողների և ծառայություններ մատուցող աշխատողների թիվը: Մակրոմակարդակում կայացող բանակցությունները, փոխզիջումային որոշումները երեք սեկտորների կողմից կորցրին նախկին արդյունավետությունը: Որոշումների կայացման նախկին կենտրոնացվածությունը փոխարինվեց դրանց դիֆուզիայով: Արդյունքում կորպորատիվիզմը սկսում է հաճախ դիտարկել նաև ոչ որպես ինքնուրույն և պլյուրալիզմին հակադրվող փոխգործակցության համակարգ, այլ ավելի շուտ մի ընդհանրական համակարգի տարր, որն ունի և կորպորատիվ և պլուրալիստական կողմեր [4, էջ 37]:

Նեոկորպորատիվիզմի դրսևորումները

Նեոկորպորատիվիզմի "դասական" տարբերակ կարելի է համարել Ավստրիայում տրիպարտիզմի հիմքով ձևավորված բիզնես-պետություն փոխգործակցության տիպը: Սոցիալական գործընկերությանը մշտական հիմունքով մասնակցում են Ավստրիայի Տնտեսական պալատը, Արհմիությունների միավորումը, Աշխատողների դաշնային պալատը, Գյուղատնտեսական պալատների ղեկավարների միությունը: Այս կազմակերպություններից երկուսը ասոցացվում են Ավստրիայի ժողովրդական, երկուսը՝ Սոցիալ դեմոկրատական կուսակցությունների հետ: Այս միավորումները իրավունք ունեն անցկացնել կառավարության ներքին քաղաքականության որոշումների փորձաքննություն մինչև դրանց ուղարկումը խորհրդարան, առաջարկություններ անել օրենսդիր մարմնին, հանդես գալ օրենսդրական առաջարկություններով: Ֆրանսիայում բիզնես-պետություն փոխգործակցությունը նույնպես ունի հստակ կորպորատիվ երանգներ: Ֆրանսիային բնորոշ է էտատիստական քաղաքական մտածելակերպը, ուր կառավարությունը առաջնորդվում է ազգային շահի գաղափարով: Հետևաբար հատվածային շահեր ներկայացնող բիզնես ներկայացուցիչները ունեն ավելի շատ տեղեկատվության տրամադրման կամ որոշումներին լեգիտիմություն հաղորդելու գործառույթ: Բիզնես ներկայացուցիչները և խոշոր ընկերությունները առանձին վերցրած փորձում էին

ազդեցություն գործել պետական քաղաքականության վրա պետական համակարգի տարբեր օղակների միջոցով: Շահերի խմբերը հմտորեն խաղում են միջգերատեսչական հակասությունների, ամբիցիաների պայքարի վրա [5]:

Թեև 70-ական թթ. նեոկորպորատիվիզմը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում համարվում էր գերակա և ցանկալի մոդել պետության հետ հարաբերություններում, ետընթաց տասնամյակներում այն զիջեց իր տեղը և այժմ նկատելի է տեղական՝ «դաշնային հողերի», բայց ոչ համապետական մակարդակում: Շմիտերի պնդումը փոխգործակցության ընդհանրական համակարգի մասին կորպորատիվ էական տարրերով առավել ցայտուն է դրսևորվում եվրոպական միության մակարդակում՝ միութենական կառույցների դեպքում: Համաեվրոպական կառույցների բազմազանությունը, բազմամակարդակությունը և խրթին ընթացակարգերը առավել նպաստավոր են պլուրալիստական և քաղաքական ցանցերի մոդելների շրջանակում գործառնելու համար: Եվրոպական խորհրդի մակարդակում անդամներից յուրաքանչյուրը ունի սեփական երկրում ձևավորված փոխգործակցության մեխանիզմները բիզնես հանրության հետ, և համաեվրոպական մակարդակում կարելի ասել ներկայացնում է հենց սեփական երկրի գործարարության շահերը: Այլ է իրավիճակը մյուս երկու գլխավոր կառույցների՝ եվրոպական խորհրդարանի և եվրոպական հանձնաժողովի դեպքում: Լինելով միակ ուղղակի ընտրված և լիազորությունների առումով սահմանափակ ներկայացուցչական կառույց՝ եվրոպական խորհրդարանի անդամները առավել ուշադրություն են դարձնում սեփական աշխատանքի հանրային գնահատականներին և բաց են համագործակցության համար տարբեր շահերի խմբերի, նախևառաջ բիզնես միավորումների առջև: Եվրոպական խորհրդարանի զեկույցում նշվում է, որ եվրոպական միության մակարդակում գործում են 950 բիզնես ասոցիացիաներ և մոտավորապես 300 անդրազգային ընկերություն, որ ունեն գրասենյակ եվրոպական կառավարչական մարմինների հետ փոխգործակցության նպատակով [6]: Եվրոպական հանձնաժողովը, հատկապես դրա բարձրագույն ղեկավարությունը, փորձում է իրականացնել շփումները բիզնեսի հետ՝ ելնելով կորպորատիվ սկզբունքներից: Որպես կանոն հանդիպումները, քննարկումները տարբեր հարցերով չեն լուսաբանվում: Բիզնես շրջանակները փորձում են ազդել հանձնաժողովի վրա նաև ազգային կառավարությունների և եվրախորհրդարանի միջոցով, ուստի կայուն փոխգործակցության կորպորատիվ մոդելը հանդիպում է լուրջ դիմադրության:

Եվրոպական հիմնական կառույցների կողմից նման տարբերակված մոտեցումները բիզնեսի հետ փոխգործակցության տիպի ընտրության հարցում

ևս մեկ ապացույց է պետական ինստիտուտի ժողովրդավարական բնույթի և գործելակերպի փոխկապվածության: Եվրոպական հանձնաժողովը չունի ուղղակի պատախանատվության պարտավորվածություն հանրության առջև, ուստի ձգտում է ընտրել փոխգործակցության մեթոդները սեփական նպատակահարմարությունից:

Եվրոպական կորպորատիվիզմի փորձը թույլ տվեց կիրառել մոդելը նաև ասիական և անցումային հասարակություններում բիզնես-պետություն հարաբերումը դիտարկելիս: Կորպորատիվիստական մոդել է գործում Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Պակիստանում, Ռուսաստանում և այլն: Հարավ կորեական ինչպես նաև ճապոնական փորձը ցույց է տալիս կորպորատիվիզմի նաև զսպող ազդեցությունը հանրային և տնտեսական զարգացման վրա: Նկարագրելով փոխգործակցության կորպորատիվ համակարգերի տարբերությունը հարավ արևելյան Ասիայում (Ինդոնեզիա, Մալազիա, Սինգապուր և Ֆիլիպիններ) ավստրալացի հետազոտողներ Գվինետ Սինգլթոնը և Մարկ Փորթերը նշում են, որ այդ երկրներում բացակայում է երրորդ սեկտորը որպես այդպիսին, իսկ հարաբերությունները գերազանցախես չունեն ֆորմալիզացված բնույթ [7,էջ-223]: Կորպորատիվիզմի նման դրսևորումը ըստ էության նոր չէ անկախ երկրների ընտրանքից, սակայն և քաղաքացիական կողմի դուրս մղումը և հարաբերությունների ֆորմալացման բացակայությունը Եվրոպայում, նաև մի շարք ասիական տնտեսություններում (օրինակ Հարավային Կորեա, Թայվան) կապված է որոշակի կայացման կամ վերափոխման ժամանակաշրջանի հետ և ընդհանուր պատկերում ուներ միջանկյալ բնույթ, մինչդեռ Արևելյան Ասիայի վերը նշված երկրներում հեղինակները խոսում են արմատացած մոդելի մասին: Գերակա դիրք ունեցող էլիտայի պահպանումն ու իշխանության արմատավորումը հանդես են գալիս նման համակարգի առաջնային նպատակներ: Նման մոդելի դեպքում, որին հեղինակները նույնացնում են օլիգարխիկ կապիտալիզմին, նույնպես առանձնացվում են տարատեսակներ: Մասնավորապես, եթե Սինգապուրի, Ֆիլիպինների և Մալազիայի դեպքում կարևորագույն խնդիր է համարվում տնտեսական աճի ապահովումը, Ֆիլիպիններում առավել ցայտուն է ձգտումը դեպի անձնական հարստացում և «քաղաքական ռենտա»:

Կորպորատիվիզմի արդիականությունը հետխորհրդային հասարակությունում

Հետխորհրդային երկրներում արդիական չէ վերլուծել բիզնես-պետություն փոխգործակցության դրսևորումները պլյուրալիստական կամ կորպորատիվ մոդելների առանձնացված շրջանակում: Այստեղ հիմնականում փոխգործակցությանը բնորոշ են նաև պլյուրալիստական մոդելի մի շարք տարրեր, ինչպես լայն հանրային քննարկումները, քննադատության հնարավորությունը

և հիմնական ակտորների համար ոչ առանցքային խնդիրներում փոքր խմբերի կողմից լոբբիզմի իրականացման հնարավորությունը: Թեև հատկապես վերջին տասնամյակում փորձ է արվում բիզնես-պետություն միջսեկտորիալ փոխգործակցությունը պարփակել կորպորատիվիզմի մոդելի շրջանակում, մեր կարծիքով հեխորհրդային երկրներում առկա հարաբերությունները տեղավորվում են, բայց չեն ամփոփվում նույնիսկ կորպորատիվիզմի ընդլայնողական մեկնաբանությունների մեջ[8]: Ի տարբերություն եվրոպական փորձի, դեռևս խորհրդային ուշ շրջանում շահերի համաձայնեցման գործընթացը ստացավ գերազանցորեն ոչ ֆորմալ բնույթ, որ աստիճանաբար փոխարինվում էր կենտրոնացված պլանավորման ֆորմալ կանոններին՝ դրանք դարձնելով ձևական կաղապար: Քանի դեռ պետություն բիզնես խմբեր հարաբերությունները հիմնական կողմերով կարգավորվեն ոչ ֆորմալ դաշտում, համագործակցության զգալի մասը կսահմանափակվի սոցիալապես նեղ հատվածով, որն ազատ է ինստիտուցիոնալ սահմանափակումներից: Փոխգործակցության հիմնական սուբյեկտ են դառնում էլիտաները, իսկ կենտրոնական տեղ գրավում ոչ ֆորմալ հարաբերությունները: Հետխորհրդային երկրների մեծամասնության դեպքում սակայն պետականորեն հռչակված փոխգործակցության սկզբունքները, առաջնահերթությունները հանրության նկատմամբ, ինչպես նաև միջազգային ինտեգրման մակարդակը, դրանով ստանձնած պարտավորությունները և սոցիալ-տնտեսական զարգացման հրամայականները հուշում են, որ կան շահերի լիարժեք արտահայտման նախապայմաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. What is Alive and what is Dead in the Theory of Corporativism L. Baccaro, 2003 - British Journal of Industrial Relations Volume 4. pp. 683-706.
2. Шмиттер Ф. Неокорпоративизм // Полис. - 1997. - № 2.
3. Wiarda, Howard J. Corporatism and comparative politics. M.E. Sharpe, 1996.
4. Schmitter Ph., Grote J. The Corporatist Sysyphus: Past, Present and Future. San Domenico: European University Institutes, 1997.
5. Иванова Е.А. Цели Государственных планов во Франции: Согласование интересов различный социальных груп www.ideashistory.org.ru/pdfs/35ivanova.pdf
6. Lehmann W., Boschel. Lobbying in European Union: Current Rules and Practices//Working Paper of Directorate General for Research.AFCO104 EN. European Parliament. Luxembourg 2003.
7. Singleton G., Turner M. Government-Business Relations and Southeast Subregional Economic Growth Triangles // Handbook of Global Economic Policy; 2000, Champaign, Illinois, USA
8. Lehmbruch G., Schmitter P. (eds). Trends Towards Corporatist Intermediation. Beverly Hills and L., 1979.